

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՂԱՋՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
e-mail: h.ghajoyan@gsu.am

Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրել Թումանյանի գրական ժառանգությունը աշխարհայացքային-փիլիսոփայական հայեցակետից:

Գրականագիտությունը հայանցիկ անդրադարձել է նրա ստեղծագործությունների խոհական-փիլիսոփայական շերտերին, սակայն նկատելի է հարցադրումների միակողմանիություն սահմանափակվածություն՝ պայմանավորված մարքսիստական փիլիսոփայության սկզբունքներով հարցերին մոտենալու նախկին պրակտիկայից: Հոդվածում հարցերը քննվել են փիլիսոփայության ընդհանուր և բազմագործառութային մեթոդաբանությամբ, պատմականության և տրամաբանական սկզբունքների ու նաև աշխարհայացքային, մարդասիրական, բարոյական, զգացական-գեղագիտական կողմնորոշման մեթոդաբանական հենքի վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Թումանյանը երբեք գաղափարական կամ կուսակցական կաղապարների մեջ չի դրել ոչ արվեստի սկզբունքները, ոչ էլ կյանքի երևույթներում ճշմարտության հայտնաբերելու հարցերը: Միաժամանակ փորձել ենք ցույց տալ, որ նրա ստեղծագործություններում փիլիսոփայական հետազոտության առումով կա հսկայական տեսական նյութ: Հանգել ենք այն հետևության, որ Թումանյանի փիլիսոփայական խորհրդածությունների առանցքում կեցության հիմնախնդիրն է՝ միահյուսված տիեզերքի ու մարդու ծագման ու գոյության խնդիրների հետ: Մարդու գաղտնիքը բացահայտելու համար նա խորամուխ է լինում տիեզերքի գաղտնիքների մեջ: Փորձ է արվել ցույց տալ, որ Թումանյանի կողմից փիլիսոփայական մտորումներն ու հարցումները ոչ այնքան հարում են որևէ փիլիսոփայական հոսանքի, դպրոցի կամ ուղղության, որքան առնչվում են փիլիսոփայական հավերժական հարցերին: Նրա համար փիլիսոփայության էությունը բարձրագույն բարոյական արժեքների հիմնավորումն է, իսկ դավանած իդեալը անարարի, բարու, կատարյալի ձգտումն է:

Բանալի բառեր՝ փիլիսոփայություն, հիմնախնդիր, կեցություն, ստեղծագործություն, տիեզերք, փիլիսոփայական հոսանք, դպրոց, ուղղություն:

Թումանյանի ստեղծագործությունները ուսումնասիրվել ու վերլուծվել են մի շարք նշանավոր գրականագետների կողմից, ովքեր նկատել ու վեր են հանել նրա ստեղծագործությունների խոհական-փիլիսոփայական շերտերը, այնուամենայնիվ, ամբողջական, խոր փիլիսոփայական վերլուծություն գրականագիտության շրջանակներում չի կատարվել: Պատճառն այն է, որ մարքսիստական գաղափարախոսության պայմաններում Թումանյանի հայացքները այդ կաղապարի մեջ «տեղավորելը» այնքան էլ հեշտ գործ չէր: Դեռ ավելին, նշանավոր ու բազմաթիվ գրականագետներից շատերը խոստովանել են, որ ներքին երկյուղով ու անվստահությամբ են մոտեցել Թումանյանի գործերի ուսումնասիրությանը՝ նկատի ունենալով նրա մեծությունը, անհասանելիությունը, խորությունը, հատկանիշներ, որոնք ինչ-որ իմաստով կաշկանդել են ուսումնասիրողին: Վերը նշվածում համոզվում ենք գրողի աշխարհայացքային-փիլիսոփայական հարցերը քննության առնելիս, ուստի Թումանյանի իմաստասիրական մտորումների վերլուծությունը ճիշտ կատարելու նկատառումներով հետևենք հենց հեղինակին: Թումանյանը, չանտեսելով մեծ գաղափարների դերը, որոնք վեհացնում ու ազնվացնում են մարդկանց, այնուամենայնիվ նշում է. «Բայց դրա համար պետք է մարդու գլուխը էնքան մեծ ու բանական լինի, որ մի որևէ մեծ գաղափար մտնի նրա մեջ ու մերվի: Դժբախտաբար, մեծ մասամբ էսպես չի լինում, գաղափարը չի մտնում գլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ»¹:

Նա երբեք գաղափարական կամ կուսակցական կաղապարների մեջ չի դրել ո՛չ արվեստի սկզբունքները, ո՛չ էլ կյանքի երևույթներում ճշմարտություն հայտնաբերելու հարցերը: Այդ մասին են վկայում դասեր՝ Նվարդ Թումանյանի հուշերը. «Ես ձև չեմ մշակել, ձև չեմ ճանաչում: Ոգևորության թափն իրավունք չի տալիս ձև մշակելու, գրելու ժամանակ չի կարելի ներշնչումը կանգնեցնել, կտրել՝ մտածելու ձև փնտրելու»²: Նկատում ենք, որ Թումանյանը հետազոտողի ուշադրությունը, միտքը չի խճճում գրական մեծ ու փոքր դպրոցների, ուղղությունների, փիլիսոփայական բազմաթիվ «իզմերի» հորձանուտում, դեռ ավելին՝ հետազոտողի համար ստեղծում է լայն տեսադաշտ, նպաստավոր պայմաններ: Մի խոսքով փիլիսոփայական հետազոտության առումով կա հսկայական տեսական նյութ, թերևս այն հնարավոր չէ ընդգրկել մեկ հոդվածի շրջանակներում:

Թումանյանի կյանքը և գրական ժառանգությունը ուսումնասիրելիս համոզված կարելի է պնդել, որ նա ծնվել էր տիեզերական համընդհանուր ճշմարտությունների ձգտելու և դրանցով ապրելու ներդաշնակությամբ: Իր ապրած բարդ ու լարված ժամանակները, կյանքի որոշակի հանգամանքները խթան հանդիսացան նրա բնատուր հնարավորությունների զարգացմանը:

¹ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 6, էջ 243:

² Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Երևան, 1957, էջ 132:

Թումանյանի փիլիսոփայական խորհրդածությունների առանցքում կեցության հիմնախնդիրն է: Ընդհանուր առմամբ չկա ամբողջական փիլիսոփայություն, փիլիսոփայական մշակույթ առանց կեցության հիմնախնդիրների, թերևս դրանց վիճահարույց լուծման պարագայում: Ելնելով փիլիսոփայական ելակետային հասկացությունից՝ կեցությունից, շարժվում ենք դեպի նրա ճանաչողությունը: Այս անցումը Թումանյանի մոտ հստակ է: Հատկապես «Դեպի անհունը» պոեմում ցույց է տրվում, որ կեցության խնդիրը ծագում է բնության հարազատ զավակի՝ մարդու անցողիկ լինելու և բնության հավերժ գոյության հարցերի շուրջ խորհրդածելիս: Թումանյանը նկատել է, որ մեր ժամանակավոր գոյությունը և բնության հավերժությունը, որին մենք հավատում ենք նույնքան, որքան մեր անցավոր լինելուն, մեզ ոչ միայն զարմանք, այլև մտահոգություն է պատճառում: Նրա մտածելակերպում տիեզերքի ծագման ու գոյության խնդիրը անխուսափելիորեն միահյուսված է մարդու ծագման ու գոյության խնդրի հետ: Հնարավոր չէ խորամուխ լինել տիեզերքի գաղտնիքների մեջ՝ առանց բացահայտելու մարդու գաղտնիքը: Այս տեսանկյունից Թումանյանը կարևորում է ինքնադիտարկման պահանջը. եթե ցանկանում ես տեր դառնալ իրականությանը, հասու լինել նրա ճանաչողությանը, ապա դա կարելի է իրականացնել միայն մարդկային էակների՝ միմյանց հետ անմիջական շփումների շնորհիվ: Սա է մարդու էության մեջ խորամուխ լինելու և բնության գաղտնիքները բացահայտելու ուղին: Այդ մասին Թումանյանը գրում է Ղ. Աղայանի հիշատակին նվիրված «Տխուր հիշողություն» հոդվածում. «Մենք հաճախ խոսում էինք բնության ու կյանքի գաղտնի ուժերից, որ տակավին մարդը չի ճանաչում և չի գիտակցում պարզորեն: Խոսում էինք և հոգիների փոխադարձ հաղորդակցության ընդունակություններից, որ տարածություն չեն ճանաչում և ազդում են ամեն տեղ ու ամեն հանգամանքներում, բայց միայն նուրբ բնության տեր մարդիկ են զգում ու հասկանում»¹: Թումանյանը ամրագրում է, որ մարդն իրեն զգում է կատարյալ հավասարակշռության մեջ աշխարհի հետ, և այդ հավասարակշռությունը չափի խախտվի: Նման մտածելակերպը նրան զերծ է պահում արհեստական անսկզբունք ու անդեմք մարդ ստեղծելուց: Մարդ արարածին ճանաչելու համար Թումանյանը քննում է նրա վարքն ու բարքը և նկատում, որ հակասականությունը մարդկային գոյության էական տարրն է: Դրա համար էլ ամրոցը վերցնելուց հետո շահի «մտքովն անցնում է աշխարհի բանը», Թմկա տիրուի ու մեջ խոսում է անցած օրերի հպարտությունը: Տիեզերական համընդհանուր՝ հակադրությունների միասնության ու պայքարի օրենքը գործում է ամենուր՝ բնության ու հասարակության մեջ, և Թումանյանը վարպետորեն այն ներառել է իր գործերում: Մարդուն ճանաչելու համար պետք է դիմագրավենք, դեմ առ դեմ ելնենք, որպեսզի նրա էությունը հասկանանք: Այդ միասնությունը ամենուր պետք է լինի չափի մեջ, քանի որ խախտելու դեպքում այն վերածվում է հակասության: Միաս-

¹ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ.4, էջ 200:

նական էր գյուղը, Սարոն ու Մոսին, մեղր վաճառող գյուղացին ու այն գնելու եկած չոբանը: Միասնականության խախտումը Թումանյանի գործերի մեծ մասում հանգեցնում է ողբերգության: Թումանյանի գործերում առանձնակի տեղ է գրավում ու դեպքերի հետագա ընթացքի վրա անդրադառնում պատահականության կամ անսպասելիության գործոնը, պատահականություն, որի հետևանքը դառնում է անհրաժեշտ: «Պատճառ-հետևանք», «անհրաժեշտություն-պատահականություն» եզրույթները լայնորեն արծարծված են Թումանյանի գործերում, դեռ ավելին՝ դառնում են հենքայինը և վճռորոշը մարդկային ճակատագրերում:

Թումանյանը 1910-ական թվականներին առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հնդկական փիլիսոփայության նկատմամբ, հատկապես վեդաների, կատարում թարգմանություններ: Այնուհանդերձ նրա կողմից փիլիսոփայորեն արծարծված հարցերը ժամանակակից ձևակերպմամբ ոչ այնքան հարում են որևէ փիլիսոփայական հոսանքի, դպրոցի կամ ուղղության, որքան առնչվում են փիլիսոփայության հավերժական հարցերի շրջանակին, որոնք քննվել են փիլիսոփայության ողջ պատմության ընթացքում, ժամանակի պահանջներին համահունչ, տվյալ ժամանակի մարդկային իմացության հնարավորությունների ու սահմանների շրջանակներում: Այդպիսի հարցերը քննվում են և այսօր, կքննվեն ապագայում ու ամեն անգամ նորովի: Նման մոտեցման պարագայում համարձակորեն նշում ենք, որ Թումանյանի ըմբռնմամբ իմաստությունը բնավ էլ հայտնի չէր տեղն ու հասկանալի չէ, այլ ուղի է, որ յուրաքանչյուր ոք պետք է ինքն անցնի, ապրի, ընկալի, դարձնի համոզմունք ու աշխարհայացք՝ որպես սոցիալական փորձ փոխանցելով հաջորդ սերունդներին: Նրա համար իմացության ամենագլխավոր և հիմնարար միջոցը եղել է կյանքի ուսումնասիրությունը, կենսական փաստերի, դեպքերի, դեմքերի, տեսածի ու լսածի վերլուծումը, համադրումը, համակարգումը: Ինչպես արդեն նշել ենք, Թումանյանի փիլիսոփայական մտորումների առանցքը կեցությունն էր՝ ողջ խորությամբ, բարդությամբ, առեղծվածայնությամբ: Կեցության խնդրից ածանցված և փիլիսոփայական հավերժական հարցերի շրջանակներում որոնվող խնդիրներն էին մարդու բնույթի և էության, կյանքի իմաստի, մահվան ու անմահության, անցողիկի ու հավերժի, բնության, նրա ծագման ու զարգացման տիեզերական ընթացքի, բազմակերպության մեջ միասնականի որոնման անհրաժեշտության, հասարակության կատարելության, աշխարհ-մարդ գերբարդ փոխհարաբերության ձևավորման աշխարհայացքային հարցերը:

Փիլիսոփայական-աշխարհայացքային տեսանկյունից Թումանյանը մտնում է «նյութական-աննյութական» երկբևեռ համակարգում: Սա փիլիսոփայական մտքի իմաստային ուղղվածության բաղադրիչն է, որը ցանկացած փիլիսոփայական մտորման մաս է կազմել, փիլիսոփայության պատմության ողջ ընթացքում եղել վիճարկելի: Այս բևեռացումը Թումանյանի մտորումներում իր հստակ ազդեցությունն է թողել մարդու բնույթի ու էության հարցերին անդրադառնալիս, որն ակնառու է հատկապես

«Դեպի անհունը» պոեմում: Պոեմի առանցքում զետեղված է մարդու գոյության և տիեզերքի հիմնարար հատկությունների կապի բացահայտումը:

Թումանյանը մարդուն քննել է բազմակողմիանիորեն, բոլոր հնարավոր իրադրությունների մեջ, բոլոր պայմաններում ու հանգամանքներում: Նա նկատել է, որ անքննադատ մտածողությամբ ինքնին հասկանալի ենք համարում մեզ շրջապատող աշխարհի գոյությունը: Սակայն, երբ փորձում ենք հարցի մակերեսային, առօրեական պատկերացումներից անցնել խորքային ըմբռնմանը, պարզվում է, որ խնդիրը ոչ միայն բարդ է, այլև առեղծվածային: Կարծում ենք՝ Թումանյանը մեծ գրողների փիլիսոփայական մտածողության վերաբերյալ առանձնակի բարձր կարծիք ուներ: Այդ է վկայում Լև Տոլստոյի մահվան կապակցությամբ արված դատողությունները. Տոլստոյը իր ժամանակի հսկա փիլիսոփան էր, որ աշխատում էր լուծել կյանքի առեղծվածը:

Ինքը՝ Թումանյանը, նույնպես փորձում է լուծել այդ առեղծվածը, ու նրան դա հաջողվել է հատկապես «Դեպի անհունը» պոեմում, որը կարելի է համարել փիլիսոփայական պոեմ կյանքի ու մահվան առեղծվածների մասին: Պոեմում հստակ ամրագրված է այն միտքը, որ մեր գոյությունը մեզ զարմանք է պատճառում հատկապես այն ժամանակ, երբ մենք մեր գոյությունը հարաբերության մեջ ենք դնում չգոյության հետ, որի անխուսափելիությունը ըմբռնում ենք: Թումանյանը վարպետորեն է օգտվել պոեզիայի՝ որպես արվեստի ձևի տված լայն հնարավորությունից՝ միացնելով փիլիսոփայական մտածողության խորքայնությանը: Օրինակ՝ օգտագործվող նյութը սահմանափակում է քանդակագործի ստեղծագործության ազատությունը, մինչդեռ բանաստեղծի ներքին էներգիան ավելի քիչ է բախվում արտաքին խոչընդոտների: Պոեզիան միակն է, որ չի նեղվում տարածությամբ, նրա տարածքը շատ լայն է, գրեթե՝ անսահմանափակ: Թումանյանի պոեզիայում այդ որակները զուգակցվում են պատկերացման հետ, քանի որ պատկերացումն անհնար է առանց տարածության: Պատկերացումների փոփոխությունը ենթադրում է ժամանակ: Թումանյանի պոեզիայում ժամանակը կապվում է տարածության հետ: Սրան հավելենք այն, որ պատճառահետևանքային հարաբերությունները Թումանյանի գործերում առատորեն «շաղ է տրված»: Այս իմաստով պոեզիայի պատկերման առարկան արդեն ոչ թե իրականության այս կամ այն հատկանիշն է միայն, այլ ողջ իրականությունը՝ որպես տիեզերքի ամբողջական ըմբռնում: Թումանյանի լեզվամտածողությամբ «Անհունը» կամ «հավերժի աշխարհը» հավերժի ձևեր են.

Թե՛ և՛ կյանք , և՛ մահ-անցավոր, ունայն

Մի մեծ հավերժի ձևերն են միայն...:

Իսկ մարդու ճանաչողական հնարավորությունները, զգայական օրգաններն ու բանականությունը հասուն՝ են արդյոք ըմբռնելու «անհունը», ասել է՝ «ամբողջը», թե՞ այն անհասանելի, անմատչելի է մեր իմացության սահմաններին:

«Դեպի Անհունը» պոեմում բազմաթիվ մտքեր կան, որոնք կասկածի տակ են առնում մարդու ճանաչողական հնարավորությունները.

*«Մենք հողեղեններս՝ անճար ու չնչին,
անգամ փղեպ, դեռ ավելին, մենք խեղճ,
կարճամիտ, ու չենք հասկանում,
Ինչպես է գալի և ուր է փանում»:*

Թումանյանը մահին ընկալում է իբրև տիեզերական կյանքի հավերժական ընթացքի ու անվերջ ձևափոխումների բնական, անհրաժեշտ օղակներից մեկը: Իսկ մահվանից հետո՞: Թումանյանը ընդունում է հոգու անմահության գաղափարը.

*Փոփոխվում է միայն, միշտ մնում է մեկ-
Մեկ մեծ ժամանակ: Էսպես էլ հոգին
Փոփոխվում է միայն կեղևն արտաքին:*

Թումանյանը գտնում է, որ ժամանակն անվերջ է և այդ ժամանակի մեջ հոգին անմահ է: Իսկ ինչպե՞ս է վերաբերում տարածության խնդրին.

*Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
Էս սև ու փրփուր թումբերը չընչին...:*

Հոգուց անջատված մարմինը մնում է տարածության մեջ, որի վկայությունը «թումբերն» են, իբրև շիրիմ, որն էլ հիշողությամբ փոխանցվում է սերնդից սերունդ: Թումանյանը նպատակ ուներ մարդուն տիեզերական մեծ հոսքի մեջ դիտել, գնահատել, արժևորել, որի համար անհրաժեշտ էր մի հաստատուն բան, այսինքն՝ ընդհանրական, կայուն, մշտական չափանիշ: Եվ այդ չափանիշը անմահ հոգին է.

*Եվ հասարարուն մի բան կա անմահ
Արդյոք իմաստուն հոգին չի միայն նա:*

Հետաքրքիր լուծում է տրվում «անմահ հոգի» և «աստված» հասկացությունների փոխառնչությանը.

*Հագած մարմինն անապական
Անմահացած մահկանացուն՝
Միանալու իր աստծուն:*

Թումանյանը գտնում է, որ աստծո գոյության հանդեպ կա անպայմանական պահանջ: Աշխարհն ունի Աստծո և գոյության միջև անհայտացող առկա կեցություն, որն էլ հավերժականն է, քանզի «հավերժականը չունի կերպարանք»:

Թումանյանը հանճարեղորեն կռահել էր, որ փիլիսոփայական հիմնախնդիրներ պարունակող գեղարվեստական ստեղծագործություններում անտեսվում է հավատի գործոնը, անպայման մնում է ոչ լիարժեքության զգացողություն: Այն փիլիսոփայական ուղղությունը, կամ դպրոցը, որը մերժում է «հավատ» հասկացությունը ընդհանրապես, հեղինակագրկում է այդ փիլիսոփայությունը, և հակառակը՝ փիլիսոփայորեն ըմբռնած հավատը տվյալ ուսմունքը դարձնում է սիրելի, հարազատ և մարդուց անբաժան:

Թումանյանի գործերը հարազատ են մարդկանց հոգուն, սիրված նրանց կողմից, որի պատճառը նաև փիլիսոփայական հավատի ներմուծումն է նրա ստեղծագործություններում:

Նկատեցինք, որ Թումանյանի ըմբռնմամբ գոյն ու ժամանակը միասնական են, իրար հետ, ժամանակը անընդհատ հոսք է: Այնուհանդերձ նա նկատել էր, որ առանձին, կոնկրետ անհատի պարագայում, երբ նա ողջ է, ապրում է, ստացվում է, որ գոյը /անհատը/, ժամանակը և շարժումը /անհատի գործունեությունը/ միասնական են: Անհատի՝ կյանքից հեռանալու դեպքում անջատվում են գոյն ու ժամանակը: Այս մոտեցման դեպքում կարող է տպավորություն ստեղծվել, որ Թումանյանի մտածելակերպում կա հակասություն: Նման հակասություն չկա, որովհետև Թումանյանը նկատի է առնում նաև յուրաքանչյուր անհատի համար իրեն տրված ապրելու և գործելու ժամանակը, որը անվանում ենք էկզիստենցիալ ժամանակ: Ժամանակի, տարածության ու շարժման բոլոր հարցերը իրենց հանգուցալուծումն են ստանում «Քառյակներում» արծարծված հետևյալ տողերում.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Այս հարցում համարձակորեն կարելի է խոսել Թումանյանի՝ ժամանակի ու տարածության վերաբերյալ պատկերացումների և էյնշտեյնի հարաբերականության տեսության հետ ունեցած առնչությունների մասին:

Թումանյանը նկատել է, որ կենսաբանական վերջավորությամբ մարդը նման է բոլոր կենդանիներին, բայց այն չի կարող կենսաբանական ավարտին հասնել նույնքան բնական, ինչպես կենդանիները: Մարդ արարածը միշտ զգում է անավարտ մնալու վտանգը: Անգամ մահկանացու լինելը նրան չի ազատում սերունդների հանդեպ բարոյական պատասխանատվությունից:

Թումանյանը նկատել է, որ մահվան առջև բոլորն հավասար են.

Բաց է էս ճամփեն ամենքիս համար.

Ծեր, երիտասարդ, մեղավոր, արդար,-

Ամենք, ամենք, էստեղ ինչ որ կան,

Էսօր թե էգուց ամենքը կերթան.

Ով որ կըմընա,

Թող նա պարծենա:

Այնուհանդերձ, անհատի վերջավոր լինելու գիտակցումը նրան հանգեցնում է իր գոյության լիարժեքության իրականացմանը, դառնալ այն, ինչ կարող էր լինել, կամ էլ իր ավարտը տեսնել պատմության մեջ: Անհատի համար սա մի նոր իրադրություն է, որը տարբերվում է առօրեականից ու սովորականից: Այս պարագայում մարդը իր գործողությունների հանդեպ դառնում է ազատ: Սա առերեսումն է՝ իմաստավորված

կամ անհմաստ իրականության հետ: Ստեղծվում է բացառիկ մի հնարավորություն, որը կարող է մարդուն փորձության ենթարկել՝ բերելով նրան կամ օգուտ, կամ վնաս: Հարստությունը, դիրքը, սոցիալական տարբերակումը, մտավոր օժտվածությունը, անգամ առողջական վիճակը դառնում են անէական: Թումանյանը կարևորում է արժանապատվությունը, համոզմունքը, աշխարհայացքը, ներքին սկզբունքը, որը չպետք է խաթարվի արտաքին դրդող հանգամանքների ազդեցությամբ: Ժողովրդական իմաստությանը մշտապես ապավինող Թումանյանը նկատել է այդ իմաստությունից սերող չարի ու բարու, մարդասիրության ու մարդատյացության խնդիրը: Ցավոք, երկուսն էլ կան ու ամրակայվում են մարդկանց հիշողության միջոցով, երկուսն էլ տեղափոխվում են հավերժականի ոլորտը: Այս առումով Թումանյանի համար փիլիսոփայության էությունը բարձրագույն բարոյական արժեքների հիմնավորումն է: Փիլիսոփայությունը պետք է ցույց տա մարդկային բանականության բարձրագույն նպատակները, որոնք արժեքներ են, որոնց մեջ գլխավորը բարոյական արժեքներն են: Դրա համար էլ անհանդուրժող է չարի նկատմամբ.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,

Անե՛ճք նըրա չար գործին....:

Թումանյանի դավանած իդեալը անարատի, բարու, կատարյալի ձգտումն է, թերևս այս ճանապարհը դժվարին է.

Ա՛խ, երանի, ով մարդ կգա, ու մարդ կերթա անարատ:

Կարծում ենք, որ Թումանյանի մարդկային կերպարը ժողովրդի պատկերացման մեջ համընկնում է նրա իսկ դավանած իդեալին:

PHILOSOPHICAL WORLDVIEWS OF LITERARY HERITAGE OF HOVHANNES TUMANYAN

GHAYOYAN HAMLET

*Dean of the Faculty of Humanities, GSU,
Ph.D. in Philosophy*

At various times, literary scholars have observed and identified the intellectual-philosophical layers of Tumanyan's works, however, a thorough, in-depth philosophical analysis has not been done. It is not possible to do this within one article, so we have focused on some key issues.

At the centre of Tumanyan's philosophical meditations is the problem of living in its broadest sense. In the frame of this question, as a consequence and derivative thereof, he has touched upon the issues of human nature and character, the meaning of life, death and immortality, the perfection of society, etc. The philosophical questions he touched upon are related to the eternal frame questions of philosophy. During the study, the author's poem "Towards the Abyss" was particularly analyzed.

Keywords: *philosophy, problem, residence, creation, universe, philosophical flux, school, direction.*

МИРОВОЗЗРЕНЧЕСКИЕ И ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ЛИТЕРАТУРНОГО НАСЛЕДИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА

КАДЖОЯН ГАМЛЕТ,

*Декан гуманитарного факультета ГГУ,
Кандидат философских наук*

В разные времена литературоведами были замечены и выявлены интеллектуально-философские пласты творчества Туманяна, однако полного и глубокого философского анализа еще не проводилось. А сделать это. в рамках одной статьи невозможно, поэтому мы обратили внимание лишь на некоторые ключевые вопросы. Основная тема философских размышлений Туманяна- проблема бытия в самом широком смысле.

В контексте этого вопроса, как исходящего, так и производного от него, ссыла на сущность и природу человека, смысл жизни, смерть и бессмертие, совершенство общества и другие вопросы. Вопросы, поднятые Туманяном, относятся к вечным вопросам философии. В ходе исследования особое внимание было уделено анализу поэмы автора "Навстречу бездне".

Ключевые слова: *философия, проблема, бытие, творчество, вселенная, философское течение, школа, направление.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ՝ 22.05.2020թ.:

Հոդվածը գրախոսվել է 27.06.2020թ.: